

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.02-17
ք. Երևան «30»_01_2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Բլեյանի, որը գործում է կրթահամալիրի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի միջին տարեկան 61 սովորողների համար հաշվարկված (առանց ընդունելության), կրթաթոշակի հատկացման պարտավորությունները ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի 09.03.02.02 ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

- 2.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի միջոցով վճարել կրթաթոշակ, որը կազմում է մինչև 3477000 (երեք միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:
- 2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 2.3 Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել ավելացնել կամ նվազեցնել:

3 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:
- 3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:
- 3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:
- 4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի Ր ա տ ու	Կ ա տ ա Ր Ո Ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն ք. Երևան, Կառույց 5 Երևանի թիվ 1 գանձապետարան ՀՀ 900011034270 Նախարարության աշխատակազմի ղեկավար----- Ն. Հարությունյան (ստորագրություն)	«Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 25 Հայկոնոմբանկ Մետաքս մասնաճյուղ ՀՀ 163218137665 ----- տնօրեն ----- Ա. Բլեյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՌԻԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՌԻՍԱՆ ԿԱՐՁԻ ԼՐԻԿ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆԿՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-17

ք. Երևան

«30»_01_2017թ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Բլեյանի, որը գործում է կրթահամալիրի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի միջին տարեկան 87 սովորողների համար հաշվարկված (առանց ընդունելության), ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի 09.03.02.01 ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

- 2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է մինչև 16469000 (տասնվեց միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ:
- 2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 2.3 Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել ավելացնել կամ նվազեցնել:

3 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱՂԵՒՈՒ ԵՎ ԾԱԽՍԵՒՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:
- 3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:
- 3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:
- 4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի Ր ա տ ու

Կ ա տ ա Ր ո Ղ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

«Երևանի «Մխիթար Սեբաստացի»

ք. Երևան, Կարդանանց 5

կրթահամալիր» ՊՈԱԿ

Պատվիրակի գանձապետարան

ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 25

Հ/Հ 900011005460

Հայկոնոմբանկ Մետաքս մասնաճյուղ

Նախարարության աշխատակազմի

Հ/Հ 163218137665

ղեկավար՝ Ն. Հարությունյան

տնօրեն՝ Ա. Բլեյան

Կ.Տ

Կ.Տ

